

KOMITAS
SALON FUNÉRAIRE
Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$565 value)

www.komitas.ca (514) 331-0400

Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի յայտարարությունը Արցախի Հանրապետության ՅՅ-ամեակի առթիվ

1991թ. Սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամաւորների ԼՂԻՄ մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին պատմական որոշումը: Նոյն թուականի Դեկտեմբերի 10-ին կայացած համաժողովրդական հանրաքուէի արդիւնքներով եւ 1992թ. Յունուարի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական անկախութեան մասին» հռչակագրով կազմաւորուեց հայկական երկրորդ հանրապետութիւնը:

Շուրջ երեսուն տարիների ընթացքում, չնայած Ատրպէյճանի մշտական սպառնալիքներին, սահմանադրական ամուր հիմքերով եւ արդիւնաւէտօրէն գործող պետական ու ժողովրդավարական հաստատութիւններով Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութեան ժողովուրդը ապահովում էր հայկական երկրորդ հանրապետութեան զարգացումը՝ փորձելով դառնալ պետութիւնների համաշխարհային ընտանիքի մաս:

Արցախահայութեան համար այս ծանրագոյն ժամանակներում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան Ազգային Ժողովը, առաջնորդուելով ժողովրդի կողմից իրեն վստահուած մանդատով եւ նրա ապագայի նկատմամբ պատասխանատուութեամբ, արձանագրում է.

- Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան ժողովուրդը իր ինքնորոշման իրաւունքն իրացրել է միջազգային իրաւունքի բոլոր նորմերին համապատասխան՝ որեւէ առնչութիւն չունենալով Ատրպէյճանական Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան հետ:

- Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան խաղաղ կարգաւորման քանակցութիւններում Արցախի ժողովրդին ներկայացնող կողմ, անտեսելով ՀՀ Անկախութեան Հռչակագրից բխող պարտաւորութիւնները, շրջանցելով Արցախի Հանրապետութեան անվտանգութեան երաշխաւորի իր անվերապահ դերն ու խախտելով 1992թ. Յուլիսի 8-ի ՀՀ Գերագոյն

խորհրդի որոշումը, Արցախը ճանաչել է Ատրպէյճանի կազմում:

- Ատրպէյճանական Հանրապետութիւնը, որպէս Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութեան ժողովրդի նկատմամբ ցեղասպանութիւն իրականացրած կողմ, խաղաղութեան մասին բարձրագոյն յայտարարութիւններով մոլորեցնելով միջազգային հանրութեանը, այսօր էլ որդեգրել է հայկական հետքը Արցախից վերացնելու՝ պատմամշակութային ժառանգութիւնը ոչնչացնելու քաղաքականութիւն, շարունակելով պատանդի կարգավիճակով ապօրինաբար պահել դերիները, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան ռազմաքաղաքական ղեկավարութեանը:

- Ռուսաստանի Դաշնութիւնը, որպէս ռուսական կայսրութեան եւ ԽՍՀՄ իրաւալիցող, հանդիսանալով 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան կողմ եւ երաշխաւոր, իր փաստացի ներկայութեան պայմաններում չի կանխել Ատրպէյճանի կողմից Արցախի ամբողջական հայաթափումը:

- ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ ի դէմս համանախագահ երկրներ Ռուսաստանի Դաշնութեան, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի՝ որպէս Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման միակ օրինական մանդատ ունեցող կառույց, վճռական կեցուածք չորդեգրեց իր իսկ կողմից հռչակած սկզբունքների պահպանման գործում: Ատրպէյճանն այդ ամէնը գնահատեց որպէս թուլութիւն եւ, արհամարհելով միջազգային հանրութեան կողմից ընդունուած ուժի չկիրառման մօտեցումները, 2020թ. եւ 2023թ. պատերազմական գործողութիւնների եւ ցեղասպանական քաղաքականութեան միջոցով բռնազրակեց միայնակ մնացած հայ ժողովրդի բազմադարեան բնօրրաններից մէկը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան տարածքը:

Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան ներկայացուցչական մարմինը, արտայայտելով Արցախի ժողովրդի կամքը, կոչ է անում.

ՀՀ իշխանութիւններին՝

— Միջազգային ատեաններում օրակարգային դարձնել Արցախի (Լեռ-



նային Ղարաբաղի) Հանրապետութեան ժողովրդի՝ հայրենիք հաւաքական կերպով վերադառնալու իրաւունքի հարցը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներին՝

- Ազգերի ինքնորոշման, տարածքային ամբողջականութեան եւ ուժի չկիրառման սկզբունքների հիման վրայ շարունակել միջնորդական առաքելութիւնն Արցախի ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ապրելու իրաւունքի իրացման նպատակով:

ՄԱԿ-ին, ՄԱԿ անդամ երկրներին՝

- Միջազգայնօրէն ստանձնած մանդատի, պարտաւորութիւնների եւ միջնորդութիւնների շրջանակում միջազգային հանրայայտ նորմերի եւ սկզբունքների, ինչպէս նաեւ Արցախի

(Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան հռչակման իրաւա-քաղաքական փաստերի հիմքով Արցախի ժողովրդի կողմից ընտրուած ներկայացուցիչների հետ գործակցութեամբ ապահովել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետութեան ժողովրդի՝ իրենց մշտական բնակութեան վայրեր վերադարձն ու այլ հաւասար եւ անկապտելի իրաւունքների իրացումը՝ որպէս ազատութեան, արդարութեան եւ համընդհանուր խաղաղութեան հիմք:

Մեր խոնարհումն ենք բերում ազատագրական պայքարի եւ պետականակերտման ճանապարհին իրենց կեանքը նուիրաբերած հերոսներին:

Ք. ԵՐԵՒԱՆ

Գոյժ

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն կը գլոժէ մահը հաւատաւոր ընկեր եւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի առաջին կազմի անդամ Հայկ-Արամ Առաքելեանի մահը: Ընկեր Առաքելեանը իր անձնազիր մասնակցութիւնը ունեցած է Մոնթրէալի Հայ Կեդրոնի հիմնադրման:

MAZDA GABRIEL ANJOU

Kevork Asadourian
General Manager

7050, boul. Henri-Bourassa Est
Anjou, QC H1E 7K7
Tél. : 514 328-7777
mazdagabrielanjou.ca

THE ALL-NEW 2024 MAZDA CX-90 PLUG-IN HYBRID



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Արցախը, Անկախութիւնն ու ազգակերտումը

«Մեր ամբողջ հպարտութիւնը, մեր ամբողջ տառապանքը, մեր մարդկային արժանապատուութեան այս ամբողջ լեզին եթէ մենք կը խմենք, կը խմենք միայն մէկ նպատակով, որ դիմադրենք, մաքառինք, մինչեւ որ հայութիւնը տիրանայ իր բոլոր իրաւունքներուն, իր ամբողջական եւ անկախ հայրենիքին»

Լեւոն Ծանթ

Անկախ պետութիւնը չի կրնար գոյատեւել առանց ազգային ինքնութեան, ազգային գաղափարախօսութեան, այն գաղափարական արժեքներով, որ կը միաւորէ համայն հայութիւնը՝ ի հայրենիք եւ ի սփիւռս աշխարհի: Ներկայ իշխանութիւնները, համակարգուած ձեւով հայ ազգի ապագան ուղենշող ազգային արժեքները ոտնակոխելով, Պատմական Հայաստանը հակադրելով «իրական» Հայաստանին, հայութեան ազգային յիշողութիւնը հեղձամահաճութեան կը դատապարտեն:

Արդէն իսկ վարչապետի իրերայաջորդ յայտարարութիւնները անառարկելի ապացոյց կը հանդիսանան այն իրողութեան, որ փոխանակ իրաւատէրը դառնալու Հայկական Հարցին, գործող իշխանութիւնները կը տապարահարեն Հայ Դատն ու Հայկական Հարցը եւ ճանապարհ կը հարթեն «Պատմական Հայաստան» մտայն յուշի վերածելու: Վերախմբագրելով պատմութիւնը, հարուած կ'ուղղուի մանաւանդ Յեղափոխութեան պատմութիւնը, հարուած կ'ուղղուի մանաւանդ Յեղափոխութեան պատմութիւնը, հարուած կ'ուղղուի մանաւանդ Յեղափոխութեան պատմութիւնը, հարուած կ'ուղղուի մանաւանդ Յեղափոխութեան պատմութիւնը, հարուած կ'ուղղուի մանաւանդ Յեղափոխութեան պատմութիւնը:

Սերունդները ազգային գաղափարախօսութեամբ դաստիարակելու առաջադրանքով է միայն, որ կարելի պիտի ըլլայ հայ ազգի կենսատարածքի ու ինքնութեան պահպանումը: Այս հաստատման տրամագծորէն հակոտնեայ ուղղուածութիւն որդեգրած են գործող իշխանութիւնները, վեց տարի է ի վեր, փայլելով իրենց բազմաբնոյթ ապագային ծրագրերով, կրթական ոլորտի դասագրքերէն սկսեալ:

Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան հիմնադրութիւնէն մինչեւ Սեպտեմբեր 21, 1991-ի անկախութիւնը, իբրեւ պետութիւն եւ ազգ, Հայաստանը երկարամիակէտ պայքարի ու մաքառումի մէջ էր Թուրքիոյ եւ Ատրպէյճանի դէմ: 1994-ի Արցախեան հակամարտութեան հրադադարէն ետք մինչեւ 2020 թուական, վերանկախացած հայրենիքի անվտանգութիւնը երաշխաւորուած էր Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան այն ռազմավարական տարածքներով, որոնք առիթը ստեղծած էին Հայրենիքին վերածուելու ամբողջ պետութեան ու անխորտակելի դարձնելու իր սահմաններու պաշտպանութեանը: Արցախի կորուստով, խախտած է 26 տարիներու դիմադրողականութիւնը, եւ խոցելի դարձած է երկրի անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը:

Արցախը Հայաստանի Հանրապետութեան արեւելեան սահմանի կէս

տարածքի պաշտպանողական մարտկուռ պարիսպն էր, այն սպառազինուած պատնէշով:– որ կ'երկարէր Վարդենիսէն մինչեւ մերձարաքսեան արցախեան ափ: Հայաստանի սահմաններու անառիկութիւնն ու անխորտակելիութիւնը պայմանաւորուած են Արցախեան պարիսպով: Քարվաճառը իր անառիկ ու բարձրադիր դիրքով, ռազմավարական պատնէշ էր Վայոց Ձորի եւ Գեղարզունիքի արեւելեան սահմաններուն համար, որ միաժամանակ կ'ապահովէր Լաչինի միջանցքի, Վարդենիսի եւ Մարտակերտի արեւմտեան հատուածի անվտանգութիւնը:

Հայաստանի անկախութեան ու ապագայ կենսագործունէութեան հիմնախարխիւն է Արցախը, իր ռազմավարական բարձունքներով, լեռնաշղթաներով ու ջրային պաշարներով, այն Ազատ ու անկախ Արցախը՝ որ պատմութեան ընթացքին, դարերով դիմակայած էր մոնղոլական, պարսկական, արաբական, սելճուքեան եւ թրքական յարձակումներուն ու սադրանքներուն:

20-րդ եւ 21-րդ դարերու հայութեան դիմադրուած պատմական ու ճակատագրական փորձութիւնները՝ այսօր ուղեցոյց պէտք է հանդիսանան ազգի ողջ ներուժի համախմբման, միասնականութեան ու ազգային գաղափարախօսութեան պահպանման:

Արցախի ժողովուրդը սեփական ինքնիշխանութիւնը ձեւաւորելու իրաւունքը ունի, եւ առ այդ, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթացը համազգային առաջնահերթութիւն պէտք է դառնայ, որուն զուգահեռ՝ Հայաստանի յանձնառութիւնը՝ երաշխաւորելու Արցախի ժողովրդի անվտանգութիւնն ու ինքնորոշման իրաւունքի իրագործումը եւ անվտանգութեան ապահովումը ռազմավարական առաջնահերթութեան պէտք է վերածուի:

Մաքառելու եւ պատնէշի վրայ կանգնելու պահն է: Պատերազմներէ եւ արհաւիրքներէ ետք, բազում ազգեր խորտակուած են, բայց ընկրկուէն ետք՝ վերականգնած: Արցախը տակաւին կը մնայ եւ պէտք է մնայ համազգային մեր քաղաքական օրակարգին վրայ, որպէս առաջնահերթութիւն ու բռնագրաւուած Արցախը վերահայացնելը՝ որպէս վսեմագոյն պարտաւորութիւն:

Գործող վարչախումբը Արցախի անկախութեան նշաձողը ոչ միայն զգետնեց՝ այլեւ տապալեց անկախութեան նշաձողը: Այժմ պէտք է վերականգնել նշաձողը: Փակուղիէն դուրս գալ ու փրկուել կարելի է, ժողովրդավարական հիմքով յեղաշրջելով ներկայ կացութիւնը՝ առաջին հերթին՝ հեռացնելով գործող ապագային ու ապիկար վարչախումբը:

«Հորիզոն»

Հրապարակուած է «Արցախ/Լեւոնային Լարաբաղ. ցեղային գտման դէպքի ուսումնասիրութիւն» գեկոյցը

Ընդհանուր առմամբ Հայ դատի Կեդրոնական գրասենեակը յայտարարութեան մը միջոցով տեղեկացուց, որ հրապարակուած է «Արցախ/Լեւոնային Լարաբաղ. ցեղային գտման դէպքի ուսումնասիրութիւն» գեկոյցը:

Ստորեւ՝ այդ յայտարարութիւնը.

«Միջազգային եւ համեմատական իրաւունքի կեդրոնը, Հայ դատի համակարգում գործող Հայկական իրաւական կեդրոնի հովանաւորութեամբ, հրապարակել է մանրամասն գեկոյց՝ անդրադառնալով Արցախում տեղի ունեցած վերջին ցեղային գտումներին, որոնք պայմանաւորուած են Ատրպէյճանի երկարատեւ հակահայկական խտրական քաղաքականութեամբ: Զեկոյցը վիճարկում է, որ Արցախի շրջափակումը, ռազմական յարձակումը եւ յաջորդող բռնի տեղահանումը իրարից առանձնացուած միջադէպեր չեն, այլ՝ հայերի դէմ խորապէս արմատացած կառուցային քաղաքականութեան դադարակէտ:

«Զեկոյցը տարբերակում է «ցեղային գտումներ» եւ «ցեղասպանութիւն» հասկացութիւնները՝ նշելով, որ, թէեւ ցեղասպանութիւնը սահմանուած է խմբին ամբողջութեամբ կամ մասնաւորի ոչնչացնելու մտադրութեամբ, ցեղային գտումները ներառում են որոշակի տարածքից խմբի բռնի հեռացում՝ բռնութեան եւ անբեկելիութեան միջոցով: Արցախի դէպքում եւրոպական խորհրդարանը եւ տարբեր փորձագէտներ իրադարձութիւնները դասակարգել են որպէս ցեղային գտումներ, ոմանք այս դասակարգումը տարածել են նաեւ ցեղասպանութեան յանցագործութեան վրայ՝ կապուած ծանր պայմանների եւ

համակարգուած ոչնչացման սպառնալիքի հետ:

«Զեկոյցի ներկայացրած ապացոյցները ցոյց են տալիս, որ Ատրպէյճանի քաղաքականութիւնը, ներառեալ՝ շրջափակումը եւ ռազմական գործողութիւնները, արտացոլում են Արցախի հայկական ներկայութիւնը արմատախիլ անելու միտումնաւոր փորձ: 2022 թ. Դեկտեմբերին սկսուած շրջափակումը սարսփելի պայմաններ ստեղծեց՝ սահմանափակելով հիմնական ապրանքների եւ ծառայութիւնների հոսքը, ինչը յանգեցրեց սննդի, դեղորայքի եւ վառելիքի խիստ պակասի: Արդիւնքում առաջացած հումանիտար (մարդասիրական) ճգնաժամը յանգեցրեց համատարած թերսնուցման, առողջութեան վատթարացման եւ կրթական ու առողջապահական ծառայութիւնների խաթարման: Զեկոյցը մանրամասնում է, թէ ինչպէս են ատրպէյճանական ուժերը թիրախաւորել գիւղատնտեսական աշխատանքները եւ խոչընդոտել տեղական սննդի արտադրութիւնը՝ խորացնելով հայ բնակչութեան տառապանքը:

«2023 թուականի Սեպտեմբերին սկսուած ռազմական յարձակումը աւելի սաստկացրեց ճգնաժամը: Զեկոյցը փաստում է, թէ ինչպէս է այդ յարձակումը, որ սկսուել է սաստիկ արտոններով եւ քաղաքացիական ենթակառուցուածքներին հասցուած համատարած վնասներով, յանգեցրել քաղաքացիական բնակչութեան զգալի զոհերի եւ տարհանման աշխատանքների լուրջ խափանումների: Ռազմական յանցագործութիւնների, այդ թւում՝ հայ խաղաղ բնակչութեան խոչտանգումները եւ անդամահատումները մասին հա-

ղորդումները ընդգծում են յարձակման դաժանութիւնը եւ այդպիսի գործողութիւնների նշանակութիւնը Արցախից հայ բնակչութեան բռնի տեղահանման գործում:

«Զեկոյցը նաեւ ընդգծում է հայկական մշակութային եւ կրօնական վայրերի շարունակական ոչնչացումը Ատրպէյճանի իշխանութիւնների կողմից, որոնք համակարգուած ձեւով ջնջում են հայկական հետքերը: Այս աւերումը ներառում է եկեղեցիների, պատմական յուշարձանների եւ խաչքարերի ոչնչացումը, ինչպէս նաեւ՝ հայկական մշակութային հետքերը վերացնելու համար յուշարձանների հուղիքում նեղակցումը: Զեկոյցը պարունակում է արբանեակային պատկերներ եւ փաստաթղթեր այնպիսի կազմակերպութիւններից, ինչպիսին է «Caucasus Heritage Watch»-ը, ինչը ցոյց է տալիս մշակութային ոչնչացման չափը, որ դատապարտուած է միջազգային կառոյցների կողմից, ինչպէս՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ն եւ Եւրոպական խորհրդարանը:

«Զեկոյցն ընդգծում է, որ մշակութային այս ոչնչացումը եւ շրջափակման ազդեցութիւնը արտացոլում են ատրպէյճանական հասարակութեան մէջ հակահայկական տրամադրութիւնների աւելի լայն օրինաչափութիւնը: Այն նկարագրում է, թէ ինչպէս է ատրպէյճանական պետական հետտրամադրութիւնը, ներառեալ՝ հակահայկական բռնութեան հերոսացումը եւ հայերի նուաստացուցիչ պատկերները, ստեղծել ապամարդկայնացման եւ խտրականութեան միջավայր: Այս միջավայրը յաւերժացնել է պետութեան կողմից

աջակցուող նախաձեռնութիւնների միջոցով, ինչպիսին է Պաքուի «Ռազմավարի պուրակ»-ը եւ ընկերային ցանցերում տարածուող հակահայկական ատկութեան խօսքը:

«Աւելի'ն. գեկոյցում նշուած է, որ Ատրպէյճանի իշխանութեան տակ գտնուող հայերի նկատմամբ վերաբերմունքը, ներառեալ՝ քաղաքական դրդապատճառներով Արցախի քաղաքական առաջնորդների կալանաւորումը եւ հակահայկական բռնութեան շարունակական հերոսացումը, արտացոլում է մարդու իրաւունքների միջազգային չափանիշների անտեսումը: Այն ընդգծում է, որ հայկական մշակութային ինքնութեան համակարգուած ժխտումը եւ մշակութային ժառանգութեան վայրերի ոչնչացումը Արցախում հայկական ներկայութիւնը վերացնելու Ատրպէյճանի աւելի լայն ռազմավարութեան անբաժանելի մասն է:

«Եզրափակիչ մասում գեկոյցը կոչ է անում միջազգային գործողութիւններ ձեռնարկել այս խախտումները վերացնելու համար՝ ընդգծելով տեղահանուած հայ բնակչութեանն աջակցութեան անհրաժեշտութիւնը: Այն նաեւ ընդգծում է, որ հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացումը, մարդու իրաւունքների կոտորտ խախտումները եւ Ատրպէյճանում հաստատուած իրաւական խտրականութեան հետ մէկտեղ, շարունակական վտանգ է ներկայացնում արցախահայկական համար եւ ընդգծում է միջազգային միջամտութեան հրատապութիւնը՝ կանխելու հետագայ վայրագութիւնները եւ աջակցելու հայերի իրաւունքների եւ ժառանգութեան վերականգնմանը»:

«Իրական Հայաստանը», եւ «իրականացումը»

Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան համաձայնագրի սպասումը մինչեւ հիմա Սամուել Պեքէթի ծանօթ անհեթեթի թատերախաղին, Սպասելով Կոտոյին, սպասման համահունչ կը թուի: Այսինքն՝ թէկուզ եւ սպասուած անձը/առարկան, այս պարագային՝ Կոտոյի/խաղաղութեան համաձայնագիրը, չգայ, սպասումը ինքնին կրնայ նոյնանալ այն անձ/առարկային հետ որ կը սպասուի: Թէեւ այս պարագային կրնայ համաձայնագիրը գալ բայց խաղաղութեան սպասումը թատերախաղի շարունակումը ապահովէ:

Հարցը այնքան ալ տրամային չէր ըլլար անշուշտ եթէ առնչակից չըլլար «իրական Հայաստան»-ի գոյտեսան: Աւելի ճիշդը՝ յստակ չէ թէ «իրական Հայաստան»-ն է որ խաղաղութեան համաձայնագրին գալուստը պիտի աւետէ, թէ հակառակը՝ խաղաղութեան համաձայնագիրը ծնունդ պիտի տայ «իրական Հայաստան»ին: Մինչեւ հիմա «իրական Հայաստան»էն կոնկրետ ունինք մաքէթ մը եւ, ինչպէս Կարէն Խանլարեան Դիմատետրային իր երեք իրերայաճորդ գրառումներով Յուլիսի սկիզբին կը բանաձեւէ, «գաղափարախօսութիւն» մը: Հայաստանի (յստակ չէ առայժմ «իրական» թէ այլ) տարբեր շրջաններուն մէջ մաքէթի վերնխաժացման պատասխանատուութիւնը իր վրայ վերցուցած է նոյնինքն Վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որուն մօտ ալ պահուած է կարծես մաքէթին օրիփնալը:

«Իրական» Հայաստանի հասկացողութիւնը, կամ անոր գաղափարախօսութիւնը, կը բացառէ իրականանալի Հայաստանի մը ընկալումը որպէս ոչ-իրական, որպէս ինքնախաբէտութիւն, որպէս վտանգաւոր ցնորամտութիւն կամ ութոփիա: «Իրականանալի» յղացքը սակայն կրնայ մեկնաբանուել շատ տարբեր: Իրականանալի են, ինչպէս վերլուծած է Սփիւռքի մտածող Վազգէն Եթիմեան, «մարդու հոգեխառնութեան եւ հոգեբանական կառոյցին ծնունդ առած բոլոր հեռանկարները, որ մարդկային ճիշդութիւնը իրականանալու յոյսը կու տան, բայց դեռ չեն իրականացած»: Այդ «մտալոգացում-իրականացում գոյգ»-ի բարդագոյն հանգրուանին, կը հասնինք «երբ անոնց սկզբնաղբիւրներն հանդիսացող հոգեխառնութիւնն ու հոգեկան կառոյցն ալ մարդկային ճիշդութիւնը կատարելագործելի համարենք եւ այս հեռանկարը ընկերային կեանքի մէջ իրականացնել կը փորձենք»: Ատոր համար ալ անհրաժեշտ են «այդ հաւաքականութեան հոգեխառնութիւնն ու տուեալ պահուած մտահոգութիւնները իւրացուցած անձերով, որոնք, այդ հոգեխառնութեան ազատ գարգացման ի խնդիր, անոր պարտադրած կաշկանդումները յաղթահարելու իղձը, ցանկութիւնը կամ ներքին մղումը կ'ունենան»: Այս գրառումը, որ խորագրուած է «Իրականանալին», մաս կը կազմէ Վարչապետ ստորագրութեամբ Ազգակազմակերպութեան Դրօշակի մէջ Վազգէն Եթիմեանի «Շարժումն մտածումը» գրութիւններու շարքին (Ժ. Կ. տարի, թիւ 15, 24 Ապրիլ 1983), որոնք առանձին հատորով Վիզէն Աւագեանի խմբագրութեամբ հրատարակուած են 2023-ին, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Դատարարական Յանձնախումբի նախաձեռնութեամբ, Պէյրութի Վահէ Սէթեան տպարանէն:

Վազգէն Եթիմեանի, ինչպէս նաեւ Սփիւռքի մէջ Հայ Դատի ամենապիտանական այդ ժամանակաշրջանին հայ քաղաքական մտածողութիւնը կերտող միւս մտաւորականներուն համար, «իրական» Հայաստանը բանավէճի ու քննարկման նիւթ չէր կրնար ըլլալ: Կար խորհրդային Հայաստանը որպէս քաղաքական իրականութիւն, կար Հայ Դատի պահանջատիրութիւնը, որ այն ժամանակ կեդրոնացած էր «մոռցուած» Յեղասպանութեան միջազգային ճանաչման առաջնախնդրին վրայ, եւ կար հարցականի տակ չգրող պատմական, ամբողջական Հայաստանը, որպէս այն «հոգեխառնութիւնը» որուն կ'ակնարկէ Եթիմեանը, եւ կը զգուշացնէ որ անոր «բացակայութեան, հաւաքականութիւնը կասկածամիտ եւ

վերապահ դիրքեր կ'որդեգրէ: Հարց կը տրուի, օրինակ, եթէ իրականանալի համարուող հեռանկարները իսկապէս իրականանալի են, թէ ցնորածին: Նման հաւաքականութեան մը համար, նորարական, յառաջատուական եւ ապագայապաշտ ամէն ձգտում առօրեայ հանգիստը խոտովող երեւոյթ է»: Ահա թէ ինչո՞ւ Եթիմեանը «այս հոգեխառնութիւնը իւրացնելու ամէնէն արագ եւ յառաջատուական եղանակներուն մասին» մտածելը հրամայական կը գտնէ, «որպէսզի իրականանալի մեր գերագոյն հեռանկարին առաջին հանգրուանը նուաճած ըլլանք»:

Կը թուի թէ «իրական» Հայաստանի գաղափարախօսութիւնը կը թիրախաւորէ ճիշդ այս հոգեխառնութիւնը: Իր ցոյց տուած մաքէթին ընկերացած խօսոյթով, Փաշինեան չ'ակնարկեր ազգայնական հանրային սպառնալիքին դիմադրողականութեան: Ընդհակառակը՝ կ'ենթադրէ այդ դիմադրողականութեան անկարողութեան, ընդ որում պատերազմի սպառնալիքի չէզոքացման միակ ուղի կը նկատէ միակողմանի զիջումները: Այլապէս, այսինքն եթէ պատերազմի աւարտին նպատակադրուէր ատրպեյճանական սպառնալիքի չէզոքացումը, պիտի իւրացուէր իրականանալի Հայաստանի մը համար անհրաժեշտ հաւաքական հոգեխառնութիւնը որպէս «առաջին հանգրուան»: Եւ այդ կը նշանակէ ճիշդը կեդրոնացնել այդ ուղղութեամբ՝ պաշտպանական համակարգի վերակազմաւորումէն մինչեւ դիւանագիտական ոլորտի մէջ Ատրպեյճանի ներկայացում որպէս նախադրած, ներքաղաքական համաձայնութեան մինչեւ Սփիւռքի ներգրաւում, իրապաշտօնէն ձգտելով Հայաստանի Հանրապետութեան տարածքէն թշնամի ուժերու դուրս բերման եւ նոր յարձակումներու զսպումի կարողականութեան (վերա)կերտումի:

Այսինքն՝ եթէ Քառասունչորսօրեայ Պատերազմին անմիջականօրէն յաջորդած հանգրուանին, երբ «վնասուց վերահսկողութեան» (damage control) քաղաքականութիւնը մը անհրաժեշտ էր ժամանակ շահելու եւ պարտութեան պատճառած շոքային հոգեվիճակէն դուրս գալու համար, որդեգրուէր քաղաքականութեան այս այլընտրանքը, թերեւս եւ բացառուէր իրականանալի Հայաստանի իրապաշտութիւնը միտող «իրական» Հայաստանի պարտուողական խօսոյթին ու անոր համապատասխան յանձնուողական հոգեխառնութիւնը:

Քառասունչորսօրեայ Պատերազմի աւարտէն ի վեր յանձնուողական հոգեխառնութեան արմատաւորման առաջը առնելը պարտուած իշխանութիւններուն ընդդիմադիր քաղաքական ուժերու մեծագոյն մարտահրաւէրն է: Տիրող համոզում է որ յանձնուողական հոգեխառնութեան բացառումը, կամ այլեւս երեւի յետաշրջումը, պայմանաւորուած

է իշխանափոխութեամբ: Սխալ չէ այս տրամաբանութիւնը: Կը մնայ որ հիմնականը յանձնուողական հոգեխառնութեան յետաշրջումն ու իրականանալի Հայաստանի հոգեխառնութեան վերականգնումն է, ինչ որ, տրամաբանականօրէն, իշխանափոխութեան կամ առնուազն պարտութիւնը շարունակող քաղաքականութեան կասեցման պիտի առաջնորդէ: Հաւու թէ հաւկիթի առաջնութեան տրամաբանութեան պարզունակութեամբ պէտք չէ ընկալել այս մօտեցումը: Պարզապէս հարց տալ եթէ կան իրապաշտօնէն «իրականանալի» նպատակներ որոնց կարելի է ձգտել ի հեճուկա պարտուած իշխանութիւններուն, եւ անոնց հասնելու շօշափելի փաստերով սկիզբ տալ հաւաքական հոգեփոխութեան:

Եթէ Հայաստանի ներքաղաքական երկպառակտումը այնքան խոր է որ հաւաքական հոգեփոխութիւնը կարելի չէ դուրս բերել իշխանութիւն-ընդդիմութիւն բախումէն, ապա եւ Սփիւռքի մէջ, ուր Հայաստանի ներքաղաքական գործընթացին վրայ ազդելու ոչ մէկ լծակ կայ եւ, ընդհակառակը, եթէ տարակարծութիւնները դուրս գան փոխ-հանդուրժողական բանավէճի սահմաններէն, կրնան պատճառ դառնալ համայնքներու մէջ վտանգաւոր պառակտումներու, իրապաշտ «իրականանալի» նպատակներուն ձգտելը հրամայական կը թուի վերագտնելու համար այն զօրաշարժի կարողականութիւնը որուն փաստը տրուած է բազմիցս: Նման առաջադրանք, որ հիմնուած է հայութեան լինելութեան հարցերու սփիւռքեան մօտեցման եւ յանձնառութեան առկայութեան համոզումին վրայ, չ'ենթադրէր խզում՝ հայրենիքի մէջ ծաւալած բանավէճին թէ կոնկրետ քաղաքական գործընթացներուն հետ: Ընդհակառակը, թերեւս ձեւ մըն է բանավէճի տարածադաշտի ընդարձակման եւ Սփիւռք-հայրենիք փոխազդեցութեան միջոցի մը ստեղծումին՝ իշխանութիւն-ընդդիմութիւն երկբեւեռումէն անդին՝ հասարակական/քաղաքացիական աւելի ընդարձակ ոլորտին մէջ:

Վազգէն Եթիմեանն ու իր ժամանակակից Սփիւռքի մտաւորականները ստեղծեցին քաղաքական մտածողութիւն եւ անոր յատուկ ամբողջ բառապաշար մը, որոնք յատկանշեցին Հայ Դատի պահանջատիրութեան տարիներու հաւաքական հոգեխառնութիւնը: Աւանդ մնացած ամբողջ ժառանգ մը կայ, որ անհրաժեշտ է վերաթարմացնել ի խնդիր Սփիւռքի մէջ քաղաքական մտածողութեան եւ գործին ինքնուրոյնացման, թէկուզ եւ, կամ թերեւս որպէսզի, այդ մտածողութիւնն ու գործը հայաստանեան հայելիին ընդմէջէն դիտելու «առօրեայ հանգիստ» (Եթիմեանի գործածած բանաձեւումի յղումով), եթէ ոչ լծացումը, խանգարուի:

Խ. Տէր Ղուկասեան

Բագրատ Արք. Գալստանեան կը պահանջէ Արցախի հարցը բանակցային օրակարգին մէջ ներառել

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ Պաքուին ներկայացուցած առաջարկը, ըստ Բագրատ Արք. Գալստանեանի, շատ նման է Կրանատայի մէջ առանց հակառակ կողմի համաձայնութեան թուղթ ստորագրելուն: Ըստ Բագրատ Արք. Գալստանի՝ սա «խաղաղութիւն մուրալ է»:

Վարչապետ Փաշինեան շաբաթ օրուան ասուելիս ժամանակ յայտնեց, որ Երեւանն ու Պաքուն ամբողջովին համաձայնեցուցած են խաղաղութեան համաձայնագրի 17 յօդուածներէն 13-ը, եւս 3 յօդուածի բառապաշարի մեծ մասը: Ապա աւելցուց, որ Հայաստանը նոր առաջարկ ներկայացուցած է Ատրպեյճանին՝ ստորագրել այն յօդուածներուն տակ, որոնք արդէն համաձայնեցուած են՝ միւսներուն քննարկումը ձգելով ապագային:

Բագրատ Արք. Գալստանը պահանջեց Արցախի հարցը բանակցային օրակարգին մէջ ներառել: Փաշինեանի հրաժարականը պահանջող Բագրատ Արք. Գալստանի եւ «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժման երէկուան հաւաքը, որ տեղի ունեցաւ Երեւանի Ս. Աննա եկեղեցւոյ շրջափակին մէջ, 2 Սեպտեմբերի՝ Արցախի Անկախութեան օրուան ընդառաջ էր:

«Արցախի հարցը փակուած չէ», յայտարարեց Արք. Գալստանը: «Անիկա իր բոլոր դրսեւորումներով եւ ծաւալումներով կը կազմէ հայկական օրակարգի առանցքը: Ինձի համար ընդունելի է Արցախը՝ թէ՛ իբրեւ անկախ հանրապետութիւն, թէ՛ վերամիաւորուած մայր Հայաստանին», ըսաւ ան՝ գործող իշխանութիւններէն պահանջելով հետամուտ ըլլալ Արցախի հիմնահարցը բանակցային օրակարգին մէջ ներառելուն:

Ան Հայաստանի իշխանութիւնները մեղադրեց «արցախցիներու տուել վերադարձի խոչընդոտը ըլլալու» յանցանքով:

ADVERTISE YOUR BUSINESS HERE

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՍԷՋ «ՅՈՐԻՉՈՆ»Ի ՁԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՍԵՅԷՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ

CALL JACK VARBEDIAN (416) 722-9225

Voyages HAIG Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
 ԼՍԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՊԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Հասցէ՝
 Voyages Haig Travel
 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
 Email info@haigtravel.ca



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, ԹԻՒ 9, Սեպտեմբեր 2024



ԿԵԱՆՔԻ ԾԱՌԸ՝ ՔՐԻՍՏՈՍ

Գերեվարուած, ազատագրուած եւ ի տես ժողովուրդին բարձրացուած Խաչի տօնն է: Գերեվարուած խաչը վերահաստատուեցաւ իր հարազատ տան մէջ՝ ի նշան զօրութեան եւ փրկութեան:

Ինչ է խաչը: Առաջին հայեացքով՝ անկենդան ու անշունչ փայտ. անցեալի հին ընկալմամբ՝ մահուան անարգ գործիք:

Խաչի խորհուրդը ամենատարբեր օրինակներով կը պատկերուի Աստուածաշունչին մէջ: Հին Կտակարանի ստեղծագործութեան պատմութեան նկարագրութեան մէջ անիկա ստեղծագործութեան պակը հանդիսացող մարդուն բարիքին եւ անմահութեան համար տնկուած

Կենաց Ծառն է, որուն վայելչութենէն զրկուեցաւ անկեալ եւ մեղսակործան մարդը, անմահութեան փոխարէն մահը ճաշակելով:

Անիկա Ղեւիի ցեղէն Ահարոնի գաւազանի պատկերն է (Թուոց 17.8), աստուածային հրաշքով ծաղկած ու պտղաւորուած՝ զօրութեան, իշխանութեան եւ առաջնորդութեան տնօրինական խորհրդանիշն է:

Անիկա Մովսէսի ձեռքով Անապատին մէջ բարձրացած պղնձեայ օծի գաւազանն է (Հմմտ. Թուոց 21), ի տես թունաւոր օձերէն խայթումը ապերախտ ժողովուրդին, որ զղջալով եւ ակնասեւեռ այդ գաւազանին հայելով բժշկութեան արժանացաւ:

Թերթենք Նոր Կտակարանի գիրքերը: Դարձեալ, անկենդան ու անշունչ փայտն է, որուն վրայ Խաչեալը իր արիւնը թափելով ամենաթանկը պարգեւեց մարդուն: Այո՛, անկենդան փայտը՝ մահուան անարգ գործիքը դարձաւ նուիրումի, սիրոյ ու զոհողութեան խորան, բայց փառքի ճանապարհի եւ կեանք: Դարձաւ խորհրդանիշը անմահական եւ յաւիտենական կեանքի ծառին:

Եղեմական ծառը մահուան պտուղը տուաւ, իսկ Խաչը՝ կեանքի, բժշկութեան ու փրկութեան պտուղը: Խաչեալ ու Յարուցեալ փրկիչը առաւել կեանք պարգեւեց մեզի, անմահութեան Կեանքի Ծառ դառնալով:

Ծառը՝ Քրիստոսի Խաչը, եղեմական մահացու պտուղի փոխարէն Քրիստոսը պտղաբերեց, ի վայելչութիւն Խաչի ժողովուրդին: Խաչը Ահարոնի մշտաձաղկեալ գաւազանն է, ի ծաղկումն եւ յառաջնորդութիւն Խաչի ժողովուրդին: Խաչը Անապատին մէջ բարձրացուած մեղսաքափչ գաւազանն է, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի բժշկումն Խաչի ժողովուրդին:

Դառնանք մեր կեանքերուն եւ քննենք մեր սրտերը.

Ո՛ր է Խաչը, որ անոր ճամբաներէն քալենք անսահ ու անվրդով, որ անոր փարոսին սեւեռ մեր հայեացքով հասնինք փրկութեան նաւահանգիստ:

Ո՛ր է Կենաց Խաչը, որ անոր խորանին վրայ պատարագուող Քահանայապետին երկրպագութեան փութանք, որ Անոր պատարագումին հաղորդակից դառնանք:

Ո՛ր է Կենաց Ծառը, որ անոր հոգեշնորհ սաղարթներուն ներքեւ մեր կեանքի օրերը ապրինք, որ անոր շնորհաբաշխ պտուղէն ճաշակենք եւ բաժին հանենք մեր նմաններուն:

Եւ ո՛ր ենք մենք այս Ա. Խաչի ճանապարհին:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Քրիստոնէական հաւատքի խորհրդանիշը՝ Յիսուս Քրիստոսի Խաչափայտը, ժամանակներէն անդին ու տարածութիւններէն վեր է:

Խաչափայտը՝ սիրոյ եւ զոհողութեան խորհրդանիշը, ձեւաւորեց պատմութեան ընթացքը եւ կը շարունակէ առաջնորդել հաւատացեալներու կեանքը:

Խաչը այն վայրն է, ուր Աստուածորդին, կամովին զոհեց Իր կեանքը մարդկութեան փրկութեան համար: Անոր խաչելութիւնը ոչ միայն ողբերգական իրադարձութիւն էր, այլ աստուածային մարգարէութեան կատարումը եւ մեր հաւատքի հիմնաքարը: Խաչը կը բացայայտէ Աստուծոյ սիրոյ մեծութիւնը, այնպիսի սիրոյ, որ պատրաստ էր չարչարանքի եւ մահուան, որպէսզի մենք հաշտուինք Անոր հետ:

Պօղոս Առաքեալ կը վկայէ. «փրկութեան ճամբուն մէջ գտնուողներու համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա» (Ա. Կորնթացիներուն 1:18):

Քրիստոնէական Դաստիարակութեան մէջ խաչի կարեւորութեան ըմբռնումը կենսական է: Ամէնօրեայ յիշեցում է՝ այն շնորհքին, որ ստացանք Յիսուս Քրիստոսով: Խաչը մեզ կը մղէ վերցնելու մեր խաչերը, ինչպէս Յիսուս ըսած էր, եւ հետեւելու Անոր արդարութեան ուղիին, նոյնիսկ երբ դժուար է: Նոյնիսկ երբ նեղութիւնները մեզ պատեն, երբեք չյուսահատինք եւ տեղի չտանք, որովհետեւ «ով որ մինչեւ վերջը դիմանայ, անիկա պիտի փրկուի» (Մատթէոս 10:22):

Խաչը այն իրականութիւնն է, որուն միջոցաւ կարելի է ուսուցանել՝ քաւութեան, փրկութեան եւ Աստուծոյ սիրոյ փոխակերպող զօրութիւնը: Խաչը մեզի կը սորվեցնէ, որ տառապանքի մէջ կայ փառք, զոհողութեան մէջ՝ կեանք, եւ մահուան մէջ՝ յարութիւն:

Մեր հաւատքի ճանապարհին ընթացքին, թող խաչը մնայ մեր քրիստոնէական դաստիարակութեան ջանքերու կեդրոնը: Թող անիկա մեզ ներշնչէ, որ կարենանք ապրիլ կարեկցութեամբ, ներել այնպէս, ինչպէս մենք ներուեցանք, եւ սիրել այնպէս, ինչպէս Տէրը Ինք կը սիրէ մեզ:

Թող Խաչը չըլլայ միայն նշան մը, զոր կրենք կամ ցոյց տանք, այլ իրականութիւն մը, զոր կ'ապրինք ամէն օր:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՍԱՐ

«Գալով ինձի, քա՛ն լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ աշխարհին համար»: (Գաղատացիս 6.14)

“As for me, however, I will boast only about the cross of our Lord Jesus Christ; for by means of his cross the world is dead to me, and I am dead to the world.” (Galatians 6.14)





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՄՐՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ (ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ) (ԲԱԺԻՆ Ե.)

«Այս քարոզը մանրամասնորեն կը սորվեցնէ, թէ սրբութեամբ, անարարութեամբ եւ մաքրութեամբ հոգին ինչպէս պէտք է ձգտի դէպի իր Տէրը, այսինքն՝ դէպի աշխարհի փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Քարոզը նաեւ յարութեան արտեմ մարմիններու պարզած վիճակին, չարին, ազապ կամքին եւ մարդկային բնութեան ու պատիւին մասին կարգ մը շինիչ խօսքեր կը բովանդակէ»:

Աստուածասիրութիւնն ու մարդուն պատիւը

21.- Երբ մարդ կը սիրէ զԱստուած, Աստուած ալ իր սէրը անոր հետ կը միախառնէ: Եւ եթէ մարդ անգամ մը Աստուծոյ սիրոյն վստահի, Աստուած ալ զայն երկնաւոր հաւատքով կը լիացնէ եւ այդպիսով մարդը կը դառնայ կատարեալ էակ: Եւ երբ անձիդ իրաքանչիւր բաժինը Աստուծոյ կ'ընծայես, ապա Աստուած ալ իր ունեցածէն անոնց հետ կը միախառնէ, որպէսզի ինչ որ ունիս, անարատութեամբ կատարուի եւ սէրդ ու աղօթքդ ալ դառնան մաքուր, անբիծ եւ անարատ:

Մեծ է մարդուն պատիւը: Տես մեծութիւնը երկինքին ու երկրին, ինչպէս նաեւ՝ Արեւուն եւ լուսնին: Սակայն Աստուած չհաճեցաւ այդ արարածներուն մէջ հանգչիլ, այլ՝ միայն մարդուն մէջ: Այդ պատճառով ալ մարդը միւս արարածներէն շատ անլի արժէք ունի եւ թերեւս ալ հպարտանամ ու ըսեմ, ո՛չ միայն երեւելի արարածներէն, այլեւ՝ աներեւոյթներէն: Ան մեծ է նոյնիսկ «ծառայող հոգիներէն» (տես Եբր 1.4): Աստուածաշունչը Միքայէլ եւ Գաբրիէլ հրեշտակապետներուն համար երբեք չ'ըսեր. «Մեր պատկերին եւ նմանութեան պէս ընենք» (Շնն 1.26), այլ ասիկա կ'ըսէ մարդուն հոգեւոր էութեան, այսինքն՝ անմահ հոգիին համար, որովհետեւ գրուած է. «Տիրոջ հրեշտակը Աստուածավախ մարդոց կողքին պահակ կը կանգնի» (Սղ 34.7):

ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ
Մեծն Սուրբ Մակար
(Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան)
(Շարունակելի 7)

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՂՕԹՔ

Խաչի՛ Յիսուս,
Ինչքան աչքեր արցունքալոյս՝
Քեզի սեւեռ լուռ կ'աղօթեն, կը մրմնջեն անձայն բառեր:
Ես չեմ տեսներ աչքերն անոնց,
Ոչ ալ գիտեմ՝ թէ ինչ կ'ուզեն...
Պահ մը միայն զիս բարձրացրո՛ւ խաչիդ վրայ՝
Քու աչքերէդ լոյս՝ արեւալոյս, թող որ նայիմ աղերսական մարդոց աչքին...
Քեզ հասկնամ լոյս հայեացքով, թող որ նայիմ
Աղօթական անոնց աչքին: Ամէն

Արշալիր Գաբունեան

ՍԵՐՄՆԱՅԱՆԻ ԱՌԱԿԸ

Յիսուս տունէն ելաւ եւ գնաց նստաւ լիճին եզերքը: Շուրջը այնքան մեծ բազմութիւն մը կ'ապրուէր, որ ինք նաակ մտաւ եւ հոն նստաւ, իսկ ամբողջ բազմութիւնը լիճին եզերքը կանգնած մնաց եւ հետեւեալ առակը պատմեց.

- Սերմանող մը սերմ ցանելու ելաւ: Սերմանած ատեն հատիկներէն ոմանք ինկան ճամբուն եզերքը եւ թռչունները եկան եւ կերան զանոնք: Ուրիշներ ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար, եւ քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան. բայց երբ արեւը ելաւ՝ այրեցան, եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորացան: Ոմանք ինկան փուշերու մէջ, եւ փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք: Իսկ ուրիշներ ալ ինկան լաւ հողի մէջ եւ պտուղ տուին, ոմանք մէկի տեղ հարիւր, ուրիշներ՝ վաթսուն եւ կամ երեսուն:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ
ԱՇԱԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ

ԱՂՕԹՔ ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ

Ո՛վ կեանքի յոյս, աղօթքները ընդունող, մեղքերը քաւող եւ խնդրանքները կատարող մեր Աստուածը՝ Քրիստոս. ընդունէ մեր պաղատանքը, Սուրբ Աստուածածնին եւ բոլոր սուրբերուն բարեխօսութեամբ: Լսէ մեզ, Տէր, եւ ողորմէ: Ներկէ մեզի, քաւէ եւ արձակէ մեր մեղքերը: Արժանի ըրէ՛ գոհութեամբ փառատրելու քեզ՝ Հօր եւ Միածին Որդիին հետ միասին. այժմ եւ յաւիտեան:

ԱՄԷՆ:

THE BOOK OF ROMANS


WRITTEN: AROUND AD55-58

WHAT YOU NEED TO KNOW:

Paul wrote this letter to the church in Rome just before he visited them. He wanted to clear up some misunderstandings between the Jewish and non-Jewish (Gentile) members of the church about the effect that Jesus' death has on the way we live out our faith. Romans gives us a strong overview of Paul's whole message about how we are put right with God through believing in Jesus. Christians were persecuted in Rome at this time, so you will also spot advice from Paul on how to behave in the face of an unfriendly society.

WHY READ IT?

There are some amazing chapters in this book that sum up who Jesus is, what he did and the difference that he makes. If you're looking for an overview of the difference that following Jesus makes, this is a brilliant book to read.



THE BOOK OF JOSHUA


WRITTEN: PROBABLY 700-500BC

WHAT YOU NEED TO KNOW:

Joshua took over from Moses as leader of the Israelites, and this book sees him lead the people as they fight for and conquer the Promised Land. After walking in the desert for 40 years, the Israelites finally got to enter this new homeland, Canaan. However, before they could settle in the land, they had to fight many battles against enemies there, and the book of Joshua shows how God faithfully helped them. It's a book about God's fulfilled promises and highlights his authority, power and might.

WHY READ IT?

The book of Joshua that God is faithful to each of his promises, even if it takes a long time for them to come about. It teaches us to be patient and that we can trust God to keep his word. Ultimately, he is in charge.



PRAYER

We thank thee, O Father almighty, who didst prepare for us the Holy Church for a heaven, a temple of holiness, wherein the name of the holy Trinity is glorified. Amen.

We thank thee, O Christ the king, who didst grant unto us life by thy life-giving and holy body and blood; vouchsafe unto us forgiveness and thy great mercy. Alleluia.

We thank thee, O Spirit of Truth, who hast renewed the holy Church. Keep her without blemish by the faith in the Trinity, from henceforth for evermore. Alleluia.

The Divine Liturgy of the Armenian Apostolic Church
[The Prayers of Thanksgiving]





ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ

Ե. ԴԱՐՈՒՆ ԻՆՉ ԹԱՐԳՄԱՆԵՑԻՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ

Մեր պատմությունն ծանօթ է, որ Ս. Սահակ Պարթև կաթողիկոս, Ս. Մեսրոպ Մաշտոց եւ ասոնց աշակերտները հայոց այբուբենի գիտն անմիջապես ետք, 404-405 թուականներում, ձեռնարկեցին Աստուածաշունչի թարգմանության, բնական է ենթադրել նախ ՆԿ-ի գիրքերէն, եւ յետոյ անմիջապես անցնելով ՀԿ-ին: Թէ էր իր աւարտին հասաւ այս առաջին թարգմանութիւնը, որ մեր պատմագրութեան մէջ «փութանակի թարգմանութիւն» բնորոշուած է (Կորին Վարդապետ եւ Մովսէս Խորենացի), ճշգրիտ չենք գիտեր, բայց կ'ենթադրուի, որ շատ արագ կատարուեցաւ եւ աւարտեցաւ անիկա:

Միս կողմէ, ծանօթ է, որ այս առաջին փութանակի թարգմանութիւնը ամբողջապէս գոհացուցիչ չէր: Թէ ձեռքի տակ եղած բնագիրները գոհացուցիչ չէին, եւ թէ սեղմ ժամանակն ու պայմանները թոյլ չէին տուած բաւարար ծանրութեամբ նայելու գործին: Այդ իրողութեան լաւ գիտակից, անգամ մը անմիջական պահանջները գոհացնելէ ետք, մեր թարգմանիչ հայրերը սկսան նոր թարգմանութեան մը մասին մտածել: Եւ բնական առիթը ներկայացաւ, երբ 431 թուականին Եփեսոսի մէջ գումարուեցաւ Տիեզերական 3-րդ ժողովը: Այդ առիթով, Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի աշակերտներէն մէկ քանին, որոնք Կոստանդնուպոլիս ուսման դրկուած էին, վերադարձին իրենց հետ բերին Աստուածաշունչի «հաստատուն, ճշմարիտ եւ ստոյգ» օրինակներ: Այսպէս, 432 թուականէն սկսեալ, Ս. Սահակ կաթողիկոս, Եզնիկ Կողբացի եւ ուրիշներ վերատեսութեան ենթարկեցին Աստուածաշունչը, իսկ որոշ գիրքեր կամ բաժիններ երկրորդ անգամ թարգմանեցին:

Վերատեսութեան եւ երկրորդ թարգմանութեան այս գործը իր լրումին հասաւ մօտաւորապէս 435 թուականին:

Առաջին հերթին կ'ուզենք գիտնալ, թէ Աստուածաշունչի գիրքերէն ինչ թարգմանեցին մեր հայրերը: Դժբախտաբար 5-րդ դարու մեր պատմագրութիւնը իր տեղեկութեանց մէջ ժխտ է այս մասին, թէպէտ շուայօրէն կը ներքողէ թարգմանութեան սքանչելի արդիւնքը:

Կորին Վարդապետ շատ ընդհանուր եւ մեզի համար անբաւարար բացատրութիւն մը կու տայ՝ երեք խումբեր յիշելով, որոնք են.- Մովսէսն ու միւս մարգարէները, Աւետարանները, եւ Պօղոս՝ առաքեալներու ամբողջ գունդով:

Մովսէս Խորենացի ատելի ճշգրիտ բնորոշում մը կու տայ, ըսելով՝ թէ հայոց տառերուն իրաշալի ստեղծումէն անմիջապէս ետք, «Իսկոյն թարգմանութեան ձեռնարկելով, եւ խորհրդաբար սկսելով Առակներէն, ամբողջ քսաներկու յայտնի [գիրքերը] եւ Նոր Կտակարանը հայերէնի փոխարդեցին՝ ինք (=Ս. Մեսրոպ) եւ իր աշակերտները»: Այստեղ ՀԿ-ի գիրքերը կը կոչուին «քսաներկու յայտնիները»: Այս բացատրութիւնը հետաքրքրական է, նախ՝ որովհետեւ Խորենացի ըստ երեսնային երբայական ձեռով հաշուելով՝ 22 գիրք կը ճանչնայ ՀԿ-ին մէջ, եւ ապա՝ որովհետեւ «յայտնի» բնորոշումով կ'ակնարկէ երբայական կանոնին մէջ առնուած գիրքերուն, ի հակադրութիւն այն միւս գիրքերուն, որոնք իրէութեան ծանօթ էին որոշ չափով, բայց կանոնական չէին ճանչցուած, այլ կը կոչուէին «թաքուն» կամ «ծածուկ»:

Հայ եկեղեցոյ կանոնի հարցը ճիշդ հասկնալու համար պէտք չէ մոռնալ, սակայն, որ Խորենացիի վկայութիւնը կը վերաբերի առաջին թարգմանութեան: Ան ըսել կ'ուզէ, թէ իբրեւ ՀԿ-ի գիրքեր, մեր հայրերը առաջին հերթին թարգմանեցին միայն երբայական կանոնին մէջ ընդունուած գիրքերը, պարզապէս որովհետեւ անոնք նաեւ Ասորական եկեղեցոյ կանոնը կը կազմէին, եւ յայտնի է, որ մեր հայրերը Աստուածաշունչի առաջին թարգմանութիւնը կատարեցին ասորերէն թարգմանութեան վրայէն:

Սակայն երբ այսօր կը նայինք հայերէն (գրաբար) Աստուածաշունչներուն, անոնք ձեռագիր ըլլան թէ տպագիր, կը տեսնենք՝ թէ անոնց մէջ կան նաեւ «երկրորդական» կոչուածները, թիւով 11 հատ. - Եզրի Ա. եւ Գ., Յուդիթ, Տոբիթ, Մակաբայեցիներու Ա., Բ., եւ Գ., Իմաստութիւն Սողոմոնի, Բարութ, Սիրաք, եւ Աղօթք Մանասէ թագաւորին:

Երկու հիմնական հարցումներ կը ծագին մեր մտքին մէջ.- ա. Երբ թարգմանուեցան ասոնք, եւ երբ անցան մեր Աստուածաշունչներուն մէջ:

բ. Ինչ հանգամանքով ներկայ են ասոնք մեր Աստուածաշունչներուն մէջ. իբրեւ կանոնական գիրքեր, թէ՛ այլ հանգամանքով:

Վերը ըսինք, թէ մեր թարգմանիչները 432-435 թուականներուն երկրորդ թարգմանութիւն մը կատարեցին: Եւ որովհետեւ այդ երկրորդ թարգմանութեան ժամանակ ՀԿ-ին համար հիմնուեցան գլխաւորաբար Եփեսոսեան բնագրին վրայ, բնականաբար անոր մէջ գտան եւ թարգմանեցին ոչ միայն երբայական կանոնին մէջ առկա գիրքերը, այլ նաեւ այն միւսները, որոնք ճանչցանք իբրեւ երկրորդական գիրքեր: Այդ մասին կասկած չունինք, այլ ընդհակառակը, անոնց 5-րդ դարու թարգմանութիւն ըլլալուն մասին վկայութիւններ ալ ունինք, եւ նոյնիսկ նոյն դարէն եկող կրկնակ թարգմանութիւններ կան (ինչպէս Սիրաքի պարագային), որոնց մանրամասնութեանց մէջ չենք մտնել: Միս կողմէ գիտենք, թէ 5-րդ դարէն սկսեալ այս գիրքերէն նաեւ որոշ ընթերցումներ տեղ գտած են Ճաշոցին մէջ:

Գալով երկրորդ հարցումին, պէտք է ըսել՝ թէ պատասխանը մեքենական չէ: Աստուածաշունչի գիրքերուն հետ անոնց թարգմանութիւնը եւ նոյնիսկ կանոնական գիրքերուն կողքին գտնուող ղեռ բաւարար չեն մեքենականօրէն հետեցնելու, թէ ուրեմն այս երկրորդականութիւնները եւ սկիզբէն իսկ մաս կազմած են Հայ եկեղեցոյ Աստուածաշնչական կանոնին: Ճաշոցին մէջ անցնիլը նոյնպէս բացարձակ ապացոյց չի կրնար ծառայել այդ մասին, որովհետեւ ընթերցումներուն մէջ ունինք նաեւ հատուածներ՝ առնուած անկանոն կամ «պարականոն» գրութիւններէ, որոնք երբեք ալ Հայ եկեղեցիին կողմէ ճանչցուած չեն իբրեւ կանոնական:

Հարցը հետեւեալն է.- Տարբեր է թարգմանութիւն կատարելը, եւ տարբեր՝ զանոնք Աստուածաշունչի կանոնին մաս համարելը: Հետեւաբար, մեր հայրերը իբրեւ ինչ թարգմանեցին զանոնք. լոկ իբրեւ օգտակար գիրքեր, թէ՛ իբրեւ կանոնական, եւ հետեւաբար «աստուածաշունչ» գիրքեր:

Այդ մասին ոչ մէկ վկայութիւն կամ արձանագրութիւն ունինք 5-7-րդ դարերէն:

ԶԱՐԵՇ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ
(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 8)

ԱՌԱԿՍ ԶԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

ՍԱԼՈՐԻՆ, ԴԱՄՈՆԻՆ ԵՒ ԾԻՐԱՆԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Ակռները հարուածելու համար, սալորը, դամոնը [սալորի տեսակ] եւ ծիրանը կ'ամբաստանուին: Անոնք կը պատասխանեն.

- Դուք չէք գիտեր, բայց հմուտ բժիշկները գիտեն, որ մենք մարդու փորին կը վսասենք: Արդ, այդ ընելով հանդերձ, երբ անոնք կը շարունակեն ուտել, ինչ պիտի ընեն, եթէ ակռները չ'արենք, հետեւաբար, փոխան ամբաստանելու, պէտք է շնորհակալ ըլլաք:

Առակիս եզրակացութիւնը հետեւեալն է: Դառն եւ ապականիչ են մեղքերը եւ զանոնք գործելու նախաբայը դաժան է: Մոլի հիւանդները կ'ուզեն, որ մեղքերը հեշտութեամբ գործուին: Հետեւաբար, եթէ դժուարութեամբ գործուող մեղքերը այնքան ախորժելի են մարդոց, ինչ պիտի ընէին, եթէ դիպրութեամբ գործուէին այդ մեղքերը: Իսելամիտ բարեպաշտներուն համար յստակ է, որ երախտապարտ պէտք ըլլալ նախախնամողին եւ ոչ թէ ամբաստանել զայն:

Մխիթար Գոշ

WORDS OF COMFORT OUR REFUGE AND STRENGTH

God is our shelter and strength, always ready to help in times of trouble. So we will not be afraid, even if the earth is shaken and mountains fall into the ocean depths; even if the seas roar and rage, and the hills are shaken by the violence.

There is a river that brings joy to the city of God, to the sacred house of the Most High. God is in that city, and it will never be destroyed; at early dawn he will come to its aid. Nations are terrified, kingdoms are shaken; God thunders, and the earth dissolves.

The LORD Almighty is with us; the God of Jacob is our refuge.

